

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Ի Ի Ն

2023 թուականին Հայաստանի Հանրապետության Կրթության, Գիտության, Մշակույթի եւ Մարմնամարզության նախարարությունը (ՀՀ Կ.Գ.Մ.Մ.Ն.) կը շարունակէ արտասահմանեան երկիրներու մէջ գործող հայկական եւ հայկական բաղադրիչ ունեցող ուսումնական հաստատութիւններուն մէջ (պետական եւ ոչ պետական վարժարաններ, նախակրթարաններ, լրացուցիչ կրթութեան հաստատութիւններ, մէկօրեայ վարժարաններ, մշակութային կեդրոններ եւ այլն) դասաւանդող ուսուցիչներու վերապատրաստման ծրագիրը:

Հայաստանի մէջ վերապատրաստութիւնը պիտի ընթանայ ՀՀ Կ.Գ.Մ.Մ.Ն. կողմէ հաստատուած տարբերակուած հետեւեալ 7 մէկամսեայ ծրագիրներով.

- «Ա.» Ուսուցում նախակրթարաններու մէջ
- «Բ.» Ուսուցում մէկօրեայ վարժարաններու մէջ
- «Գ.» Տարրական ուսուցում
- «Դ.» Հայոց լեզուի եւ գրականութեան դասաւանդում
- «Ե.» Հայոց պատմութիւն եւ Հայ մշակույթ
- «Զ.» Պարարուեստ
- «Է.» Տնօրէններու վերապատրաստութիւն

Կը կցենք ծրագիրներու նկարագրութիւնները.

Դասընթացքներն աւարտած ուսուցիչներուն պիտի տրամադրուին ՀՀ Կ.Գ.Մ.Մ.Ն. նախարարութեան կողմէ վկայագիրներ:

Դասընթացքի կազմակերպման, ուսուցիչներու կեցութեան, թանգարաններու եւ շրջագայութեան ծախսերը, ծրագրի բացման օրէն մինչեւ փակումը, ստանձնած է Հայաստանի Հանրապետութիւնը: Ճամբորդութեան ծախսը, ներառեալ օդանակայանէն մինչեւ հիւրատուն (փոխադրութիւնը) ճամբորդութիւնը եւ Հայաստան մուտքի արտօնագիրը (վիզա), բժշկական ճամբորդական ապահովագրութեան ծախսերը պիտի հոգան մասնակիցները կամ համապատասխան կազմակերպութիւնները, վարժարանները, բարերարները:

Վերապատրաստման ծրագրի սկիզբը եւ հիւրատան մուտքի օրը՝ Յուլիս 2:

Ծրագրի ժամանակացոյցը հետեւեալն է.

- | | |
|-----------|--|
| Յուլիս 2 | հիւրատուն մուտքի եւ տեղաւորման օր |
| Յուլիս 3 | ծրագրի պաշտօնական բացում |
| Յուլիս 28 | ծրագրի պաշտօնական փակում եւ վկայականներու յանձնում |
| Յուլիս 29 | հիւրատունէն ելքի օր |

Հիւրատան սենեակները նախատեսուած են 2-3 անձի համար: Աւելի կանուխ ժամանելու կամ ուշ մեկնելու պարագային կեցութեան ծախսերը պիտի հոգան մասնակիցները:

Դասընթացքին մասնակցութեան համար անհրաժեշտ է մինչեւ **Մայիս 28-ը ներառեալ** ՀՀ Կ.Գ.Մ.Մ.Ն. ներկայացնել ուսուցիչի կողմէ լրացուած եւ վարժարանի տնօրէնութեան կողմէ վաւերացուած յայտադիմումը (կցուած է):

Մասնակցութեան պաշտօնական հաստատումները ուսուցիչներուն պիտի տրամադրուին իրենց էլեկտրոնային հասցէներով՝ յայտադիմումը յանձնելէ մինչեւ Յունիս 11-ն ինկած ժամանակահատուածին: Երկիրէն եւ աշխատավայրէն բացակայութիւնը հիմնաւորելու համար պաշտօնական հրաւերի անհրաժեշտութեան պարագային կը խնդրուի տեղեկացնել նախօրօք:

Վերապատրաստող կազմակերպութեան, հիւրատան եւ կեցութեան հետ կապուած այլ տեղեկութիւններ, ինչպէս նաեւ դասընթացքի կազմակերպման եւ ընթացքի մանրամասները պիտի փոխանցուին յայտագրուած ուսուցիչներուն:

Մասնակիցներու համար նախատեսուած են նաեւ հանդիպումներ, ճանաչողական-ուսուցողական շրջայցեր եւ մշակութային ծրագիր:

Յաւելեալ տեղեկութիւններ կարելի է ստանալ ՀՀ Կ.Գ.Մ.Մ.Ն Սփիւռքի հետ կապերու բաժինէն.

Հեռ. +374 10 58-13-91, 374 91-71-61-62 (What's App, Viber)

Facebook: «Սփյուռքի հետ կապերի բաժին»

Ել. փոստ. alvina.elyan@escs.am